









ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԻՋԱՆՅԿՅԱԼ ՀԱՇՎՏԵՎՈՒԹՅՈՒՆ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ

ՀՀ, ք. Երևան, Չարենցի 12, թիվ 53, 1-5, հեռ. (+374 10) 59 22 59, էլ. փոստ
unibank@unibank.am

Էական փաստերը և տեղեկությունները ներառող հաշվետվություն թիվ 3 23.10. 2017

Արժեթղթերի դասը՝ սովորական բաժնետոմս
 Արժեթղթերի քանակը՝ 172,886,525 հատ
 Արժեթղթերի դասը՝ արտոնյալ հաստատագրված բաժնետոմս
 Արժեթղթերի քանակը՝ 32,010,000 հատ
 Արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ 100 ՀՀ դրամ
 Ստորագրող անձինք՝

Արարատ Ղուկասյան	Վարչության նախագահի առաջին տեղակալ		23.10.2017թ
Գոհար Գրիգորյան	Վարչության անդամ, Ֆինանսական տնօրեն - Գլխավոր հաշվապահ		23.10.2017թ
Դավիթ Պետրոսյան	Վարչության անդամ, Կորպորատիվ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն		23.10.2017թ
Մեսրոպ Հակոբյան	Վարչության նախագահի տեղակալ, Օպերացիոն սպասարկման և տեղեկատվական համակարգերի գծով տնօրեն		23.10.2017թ
Օվսաննա Առաքելյան	Վարչության նախագահի տեղակալ, Իրավական սպասարկման և ժամկետանց պարտավորությունների հետքերման գծով տնօրեն		23.10.2017թ
Գուրգեն Ղուկասյան	Վարչության անդամ, Մանրածախ բիզնեսի զարգացման և վաճառքների տնօրեն		23.10.2017թ
Տիգրան Բաղանյան	Վարչության անդամ, Ռիսկերի կառավարման տնօրեն		23.10.2017թ
Վարդան Աթայան	Վարչության նախագահ - Գործադիր տնօրեն		



Բանկի ամփոփ ֆինանսական տվյալները

Բացարձակ արժեքով ներկայացված ցուցանիշներն արտահայտված են հազ. ՀՀ դրամով:

	2015թ.	2016թ.	2017թ. 1-ին եռամսյակ (աուդիտ չանցած)	2017թ. 2-րդ եռամսյակ (աուդիտ չանցած)	2017թ. 3-րդ եռամսյակ (աուդիտ չանցած)
Ցուցանիշի անվանումը					
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	358,481	-443,218	90,245	146,922	218,181
Սեփական կապիտալի միջին մեծություն	21,572,971	29,704,263	35,315,234	35,300,966	35,327,511
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE), %	1.7%	-1.5%	1.0%	0.8%	0.8%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	358,481	-443,218	90,245	146,922	218,181
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	164,199,203	174,248,544	186,388,688	189,208,025	189,125,840
Ակտիվների շահութաբերություն (ROA), %	0.2%	-0.3%	0.2%	0.2%	0.2%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	358,481	-443,218	90,245	146,922	218,181
Գործառնական եկամուտ	9,421,982	10,831,503	2,846,157	6,235,120	9,390,642
Զուտ շահույթի մարժա (NPM), %	3.8%	-4.1%	3.2%	2.4%	2.3%
Գործառնական եկամուտ	9,421,982	10,831,503	2,846,157	6,235,120	9,390,642
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	164,199,203	174,248,544	186,388,688	189,208,025	189,125,840
Ակտիվների օգտագործման գործակից (AU), %	5.7%	6.2%	6.2%	6.6%	6.6%
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	164,199,203	174,248,544	186,388,688	189,208,025	189,125,840
Սեփական կապիտալի միջին մեծություն	21,572,971	29,704,263	35,315,234	35,300,966	35,327,511
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM)	7.61	5.87	5.28	5.36	5.35
Զուտ տոկոսային եկամուտ	6,283,035	8,361,044	1,416,599	2,886,827	4,730,450
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	121,353,467	131,429,702	139,390,629	145,530,873	147,066,165
Զուտ տոկոսային մարժա (NIM)	5.2%	6.4%	4.1%	4.0%	4.3%
Տոկոսային եկամուտ	19,714,397	21,329,971	4,570,440	9,160,779	13,839,178
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	121,353,467	131,429,702	139,390,629	145,530,873	147,066,165
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն	16.2%	16.2%	13.3%	12.7%	12.6%
Տոկոսային ծախսեր	13,431,362	12,968,927	3,153,841	6,273,952	9,108,728

Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	140,958,062	142,975,618	149,445,216	152,239,723	152,129,234
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	9.5%	9.1%	8.6%	8.3%	8.0%
Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	358,481	-443,218	90,245	146,922	218,181
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը	131,094,713	163,963,708	200,242,275	202,569,400	203,345,108
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	2.7	-2.7	0.5	0.7	1.1
Սպրեդ	6.7%	7.2%	4.7%	4.4%	4.6%

Այսօր Յունիբանկը ունիվերսալ բանկ է, որը հաճախորդներին առաջարկում է ժամանակակից բանկային ծառայությունների լայն տեսականի: Բանկի Խորհրդի մշակած ռազմավարությանը համապատասխան Յունիբանկի գործունեության հիմնական ուղղություններն են մանրածախ բիզնեսը և աջակցությունը փոքր և միջին ձեռնարկատիրությանը: Ներկայումս Յունիբանկը ներկայացված է գլխամասային գրասենյակով, 46 մասնաճյուղերով և 115 պրոմո կետերով:

2017թ.-ի երրորդ եռամսյակում Յունիբանկը գրանցել է դրական ֆինանսական արդյունքներ գործունեության բոլոր հիմնական ուղղություններով և շարունակել է շահույթի աճը: Բանկի ակտիվները հաշվետու ժամանակահատվածում կազմել են ավելի քան 188.9 մլրդ ՀՀ դրամ, պարտավորությունները՝ մոտ 153.5 մլրդ ՀՀ դրամ: Բանկը շարունակել է ակտիվ աջակցություն ցուցաբերել ՓՄՁ-ներին և անհատ ձեռնարկատերերին՝ ձգտելով մեծացնել տնտեսության իրական հատվածի վարկավորման ծավալները:

Հավատարիմ մնալով իր վարկային քաղաքականությանը՝ Բանկը շարունակել է դիվերսիֆիկացնել իր վարկային պորտֆելը՝ մեծացնելով մանրածախ վարկերի և ՓՄՁ վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում: Խոշոր ձեռնարկություններին վարկավորելիս Բանկը վարել է պահպանողական քաղաքականություն, հիմնականում ակտիվները կարճաժամկետ տեղաբաշխվել են համեմատաբար ցածր ռիսկային ճյուղերում: Այս նպատակով Բանկը պարբերաբար կատարել է տնտեսության ճյուղերի վերլուծություն, ինչպես նաև ՓՄՁ-ի գծով պլանային ցուցանիշները կատարելու նպատակով իրականացվել են ՓՄՁ վարկավորման գծով սքորինգային մոդելի մշակում, ՓՄՁ վարկային հայտերի հաստատման ավտոմատացում, ՓՄՁ վարկավորման գծով աշխատակիցների որակավորման բարձրացում:

Վինտաժային վերլուծությունները, ստրես տեստավորումները, ներքին և արտաքին աուդիտի կողմից կատարվող ստուգումները թույլ են տալիս ժամանակին բացահայտելու և կառավարելու Բանկին բնորոշ ֆինանսական և գործառնական ռիսկերը:

Հավատարիմ մնալով իր վարկային քաղաքականությանը՝ Բանկը շարունակել է դիվերսիֆիկացնել իր վարկային պորտֆելը՝ մեծացնելով մանրածախ վարկերի և ՓՄՁ վարկերի տեսակարար կշիռը վարկային պորտֆելում: Խոշոր ձեռնարկություններին վարկավորելիս Բանկը վարել է պահպանողական քաղաքականություն, հիմնականում ակտիվները կարճաժամկետ տեղաբաշխվել են համեմատաբար ցածր ռիսկային ճյուղերում: Այս նպատակով Բանկը պարբերաբար կատարել է տնտեսության ճյուղերի վերլուծություն, ինչպես նաև ՓՄՁ-ի գծով պլանային ցուցանիշները կատարելու նպատակով իրականացվել են ՓՄՁ վարկավորման գծով սքորինգային մոդելի մշակում, ՓՄՁ վարկային հայտերի հաստատման ավտոմատացում, ՓՄՁ վարկավորման գծով աշխատակիցների որակավորման բարձրացում:

Բանկի կանոնադրական կապիտալը 2017թ. հունիսի 30-ի դրությամբ կազմում է 20,489,652,500 ՀՀ դրամ, որը ներառում է տեղաբաշխված 172,886,525 սովորական բաժնետոմս, յուրաքանչյուրը 100 ՀՀ դրամ անվանական արժեքով և 32,010,000 հատ

արտոնյալ բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 100 ՀՀ դրամ անվանական արժեքով: Բանկի կանոնադրական կապիտալը արտահայտված է ՀՀ դրամով:

2017թ.-ի 3-րդ եռամսյակում Յունիբանկի «Գարեգին Նժդեհ» մասնաճյուղը տեղափոխվեց առավել ընդարձակ և ժամանակակից չափանիշներով կառուցված գրասենյակ («Երևան Մոլ» առևտրի և զվարճանքի համալիր): Հաճախորդների սպասարկման գործընթացն էլ ավելի արագ կազմակերպելու նպատակով, «Գարեգին Նժդեհ» մասնաճյուղն աշխատելու է նաև «մեկ պատուհանի» սկզբունքով: Ավանդի, վարկի, բանկային քարտի ծնակերպումը, դրամական փոխանցման իրականացումը կամ կոմունալ վճարումը կարելի է կատարել՝ դիմելով բանկի ընդամենը մեկ աշխատակցի: Դրամարկդին կամ սպասարկող այլ մենեջերին լրացուցիչ մոտենալու կարիք այլևս չկա:

Այս ժամանակահատվածում բժշկական հաստատությունների աշխատակիցներին Յունիբանկն առաջարկեց հատուկ մշակված վարկային քարտեր «U-Doctor»՝ շահավետ պայմաններով:

«Յունիբանկ» ԲԲԸ-ի Խորհրդի 16.08.2017թ. որոշման և ՀՀ Կենտրոնական Բանկի նախագահի թիվ N 1/694Ա որոշման /30.08.2017թ./ համաձայն, 11.09.2017թ.-ից դադարեցվեց «Յունիբանկ» ԲԲԸ-ի «Պարույր Սևակ» մասնաճյուղի գործունեությունը: «Պարույր Սևակ» մասնաճյուղի ակտիվները և պարտավորությունները փոխանցվեցին բանկի «Ձեյթուն» մասնաճյուղ, որը 11.09.2017թ.-ից սկսեց գործել ք.Երևան, Պարույր Սևակ N51/9 հասցեում: Նման որոշում ընդունվեց հաճախորդների սպասարկման գործընթացն էլ ավելի հարմարավետ և ընդարձակ մասնաճյուղ տեղափոխելու նպատակով:

2017թ.-ի սեպտեմբերի 11-ից «Յունիբանկ» ԲԲԸ-ն սկսեց անվանական արժեկտրոնային պարտատոմսերի հերթական թողարկումը: Դոլարային պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը կազմում է 5.75%, շրջանառության ժամկետը՝ 36 ամիս: Արժեկտրոնային եկամտի վճարումն իրականացվելու է եռամսյակային պարբերականությամբ: Պարտատոմսերի մարումը կիրականացվի 11.09.2020թ.-ին:

2017թ.-ի առաջին յոթ ամիսների արդյունքներով Յունիբանկի գործառնական շահույթը մինչև պահուստներին մասհանումներ կատարելն արձանագրել է աննախադեպ աճ և կազմել 3.4 մլրդ ՀՀ դրամ՝ գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը ավելի քան 1,5 անգամ: Աճը հիմնականում պայմանավորված է բանկի գործունեության արդյունավետության բարձրացմամբ և բոլոր բիզնես ուղղությունների գծով ֆինանսական ցուցանիշների բարելավմամբ: ՖՀՄՍ-ի համաձայն, Յունիբանկի զուտ տոկոսային եկամուտը, մանրաձախ և բիզնես վարկավորման ոլորտում դիրքերի ամրապնդման արդյունքում աճել է գրեթե 10%-ով: Զգալի աճել են բանկի զուտ ոչ տոկոսային եկամուտները՝ ավելի քան 110%-ով:

Բանկի տոկոսային և ոչ տոկոսային եկամուտների աճը մեծամասամ պայմանավորված է վարկավորման ծավալների աճով, պորտֆելի ճիշտ դիվերսիֆիկացմամբ, ինչպես նաև՝ շահութաբերության ցուցանիշների բարելավմամբ:

2017թ.-ի սեպտեմբերին Moody's Investors Service միջազգային գործակալությունը հաստատել է Յունիբանկի վարկանիշը՝ սահմանելով B2, կանխատեսումը՝ կայուն:

2017թ.-ի 3-րդ եռամսյակում Յունիբանկն սկսեց առաջարկել հիփոթեքային վարկեր առաջնային և երկրորդային շուկայում բնակելի կամ բիզնես անշարժ գույքի ձեռքբերման համար՝ առանց կանխավճարի: Փոխարենը վարկառուն գրավադրում է լրացուցիչ անշարժ գույք: «Դասական առանց կանխավճարի» վարկի առավելագույն գումարը կազմում է 150 000 ԱՄՆ, ժամկետը՝ 20 տարի, իսկ տոկոսադրույքը՝ սկսած 11.7% տարեկան: Հաշվի առնելով առանց կանխավճարի հիփոթեքային վարկերի հանդեպ բնակչության մեծ պահանջարկը, Յունիբանկը հայտարարում է նաև հատուկ ակցիա, որի շրջանակներում կարելի է ձեռքբերել բնակարաններ ք. Երևան, Լվովյան 14 հասցեում գտնվող նորակառույց բազմաբնակարանային շենքում արտոնյալ պայմաններով: Մասնավորապես, կանխավճարը կազմում է 0%, տոկոսադրույքը՝ 9.5% տարեկան, ժամկետը՝ մինչև 20 տարի: Ռիսկերի կառավարումը Յունիբանկի կառավարման համակարգի կարևորագույն մաս է կազմում: Յունիբանկում ռիսկերի կառավարումն իրենից ներկայացնում է Բանկի պոտենցիալ վնասների կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված փոխկապակցված գործողությունների համակողմանի համակարգ: Ռիսկերի կառավարման հիմնական նպատակն այն է, որ Յունիբանկը կարողանա իր ռիսկերի գումարային մեծությունը պահպանել Բանկի ռազմավարական ծրագրով սահմանված ռիսկերի մակարդակի վրա և բարձրացնել Բանկի կապիտալի եկամտաբերությունը:

Յունիբանկում ռիսկերի կառավարման համակարգն առաջնորդվում է ՀՀ օրենքներով, ՀՀ ԿԲ օրենքներով և նորմատիվ ակտերով, կանոնակարգերով, Բազելյան կոմիտեի համապատասխան փաստաթղթերով, Ռիսկերի Կառավարման Համընդհանուր Սկզբունքներով / Generally Accepted Risk Principles – GARP/, ինչպես նաև հնարավոր է օգտագործվեն Բանկի կողմից ընդունված գնահատման և վերլուծության համար սեփական մեթոդներ, ցուցանիշներ և կառավարման գործիքներ: Ռիսկերի կառավարումն իրականացվում է ռիսկերի նույնականացման, չափման և մոնիթորինգի շարունակական գործընթացի միջոցով՝ ռիսկերի սահմանաչափերի և հսկողության այլ միջոցների պահպանմամբ: Ռիսկերի կառավարման գործընթացը ծայրաստիճան կարևոր է Բանկի շահութաբերության պահպանման համար, և Բանկում աշխատող յուրաքանչյուր անձ պատասխանատվություն է կրում իր պարտականությունների հետ կապված ռիսկերի համար: Բանկը խրախուսում է ռիսկերի կառավարմանն առնչվող գիտելիքների մակարդակի բարձրացմանը նպաստող մշակույթի ձևավորումը՝ մասնավորապես համապատասխան սեմինարների կազմակերպման միջոցով:

Իր գործունեության ընթացքում Բանկը ենթարկվում է մի շարք ֆինանսական ռիսկերի, և այդ գործունեությունը ներառում է ռիսկի կամ ռիսկերի համադրության որոշ աստիճանի վերլուծություն, գնահատում, ստանձնում և կառավարում:

Վարկային ռիսկ է համարվում վարկառուի կողմից ստանձնած վարկային պարտավորությունների չկատարման կամ թերի կատարման և վերջինիս արդյունքում Բանկի վնաս կրելու հավանականությունը (վարկի սահմանումը տրված է Բանկի “Վարկային քաղաքականություն”-ում),

Շուկայական ռիսկ է համարվում շուկայական գործոնների (արտարժույթի փոխարժեք, տոկոսադրույքներ) փոփոխությամբ պայմանավորված Բանկի վնաս կրելու հավանականությունը,

Իրացվելիության ռիսկ է համարվում Բանկի կողմից իր պարտատերերի օրինական պահանջները ճիշտ ժամանակին չբավարարման խնդիրների ի հայտ գալու և վերջինիս արդյունքում Բանկի վնաս կրելու հավանականությունը,

Կապիտալի համարժեքության ռիսկ է համարվում ռիսկով կշռված ակտիվների և/կամ ընդհանուր կապիտալի տարրերի փոփոխման պարագայում Բանկի կապիտալի անբավարարության (ոչ համարժեքության) հավանականությունը:

Գործառնական ռիսկ է համարվում Բանկի ներքին կազմակերպչական և/կամ բիզնես գործընթացների խափանման (անձնակազմի ոչ համարժեք կամ ոչ կանոնակարգային գործողություններ, դիտավորությամբ կատարված կամ ոչ միտումնավոր գործարքային սխալներ, գործառնական համակարգերի կամ տեխնոլոգիական բնույթի այլ խափանումներ) կամ տեխնածին բնույթի արտաքին գործոնների ազդեցության արդյունքում Բանկի վնաս կրելու հավանականությունը:

Իրավական ռիսկ է համարվում Բանկի ներքին իրավական ակտերի, կիրառվող բիզնես գործընթացների, գործիքների, գործարքների, ինչպես նաև վերջիններս կարգավորող պայմանագրերի գործող օրենսդրությանը չհամապատասխանելու և դրա արդյունքում Բանկի վնաս կրելու հավանականությունը:

Համբավի (հեղինակության) ռիսկ է համարվում հանրության բացասական կարծիքի հետևանքով Բանկի կողմից իր գործող կամ պոտենցիալ հաճախորդներին, գործընկերներին կորցնելու կամ վերջիններիս հետ իրականացվող գործարքների/գործառնությունների ծավալի նվազման հավանականությունը, որը կարող է հանգեցնել Բանկի համար ֆինանսական կորուստների և/կամ իրացվելիության խնդիրների:

Ռազմավարական (բիզնես մոդելի) ռիսկ է համարվում Բանկի կողմից ոչ իրատեսական (անհամապատասխան) ռազմավարության ընտրության, ինչպես նաև ընտրված ռազմավարության հիմքում ընկած ենթադրությունների, ցուցանիշների, նպատակների և/կամ այլ գործոնների բացասական փոփոխությունների ի հայտ գալու հավանականությունը, որը կարող է հանգեցնել Բանկի ֆինանսական կորուստների:

Բանկի ռիսկերի կառավարման համակարգի բաղադրիչներն են՝

Ռազմավարությունը,

Մեթոդաբանությունը,

Վերահսկողությունը,

Արդյունավետության գնահատումը,

Արդիականացումը (անհրաժեշտության դեպքում):

Բանկային ռիսկերի կառավարում է համարվում Բանկի իրավասու մարմինների, ստորաբաժանումների կամ անձանց կողմից այնպիսի գործողությունների իրականացումը, որը հնարավորություն կընձեռի բանկային ռիսկերի առկայության և անորոշության պայմաններում ապահովել դրական ֆինանսական արդյունք:

ՌԿՀ-ն գործում է անընդհատության սկզբունքով՝ հաշվի առնելով ներքին և արտաքին միջավայրերի դինամիկ փոփոխությունները:

Բանկային ռիսկերի կառավարումն իրականացվում է ուղղահայաց եռաստիճան համակարգով՝

Ռազմավարական մակարդակ՝ ռիսկերի բացահայտում, ընդունելի ախորժակի, գործընթացների և սահմանաչափերի սահմանում,

Վերահսկողական/հսկողական մակարդակ՝ մոնիտորինգ, շեղումների վերլուծություն, գնահատում և համապատասխանեցում,

Մարտավարական մակարդակ՝ ռիսկերի ընթացիկ կառավարում թույլատրելի սահմանաչափերի միջակայքում (ռիսկ պարունակող գործարքների իրականացում):

Բանկային ռիսկերի կառավարման գործընթացի փուլերն են՝

Ռիսկերի բացահայտումը (սահմանումը), ներառյալ ռիսկի գործոնների վերլուծությունը (տարրանջատումը),

Ռիսկերի գնահատման մեթոդների սահմանումը (ըստ տեսակների) և ռիսկերի գնահատումը (կանխատեսումը),

Ռիսկերի սահմանափակումը, այն է՝ դիվերսիֆիկացիայի սկզբունքների, ներքին սահմանաչափերի հաստատումը, ինչպես նաև համապատասխան ներքին իրավական ակտերի մշակումը և ընդունումը, որոնցում, մասնավորապես, ներառվում են բազմակի ստուգման, միևնույն գործընթացի իրականացումը տարբեր, միմյանց հետ չփոխկապակցված անձանց վրա դնելու և սխալների բացահայտման սկզբունքները:

Ռիսկերի գործնական կառավարումը, այն է՝ համապատասխան գործողությունների իրականացումը, իրավիճակային արձագանքումը (խուսափում, նվազեցում/հեջավորում, փոխանցում/ապահովագրություն, ռիսկի ընդունում և այլն),

Ռիսկերի մոնիտորինգը, վերլուծությունը, ընթացիկ (օպերատիվ) և պարբերական հաշվետվությունների/տեղեկատվության տրամադրումը ուղղահայաց և հորիզոնական կտրվածքներով,

Ռիսկերի կառավարման հետգործարքային վերահսկողությունը:

Յուրաքանչյուր ռիսկի տեսակի կառավարման գործընթացը (սահմանաչափերը, կառավարումը, վերահսկողությունը, հաշվետվությունները, պատասխանատուները և այլն) կարգավորվում է համապատասխան կարգերով, ընթացակարգերով:

ՋԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՌՌՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յունիբանկի հիմնական նպատակներն են ՀՀ բանկային համակարգում իր դիրքերի ամրապնդումը, բիզնեսի ծավալների աճը և բարձր շահութաբերություն ունեցող ուղղությունների զարգացումը, գործունեության արդյունավետության բարձրացումը՝ ժամանակակից տեխնոլոգիաների և կառավարման մեթոդների ներդրման, ավտոմատացման, մասնաճյուղային ցանցի և վաճառքների ուղիների ընդլայնման և հաճախորդամետ քաղաքականության միջոցով:

Բանկում գործում է լիարժեք կորպորատիվ կառավարման կառուցվածք, որը ներառում է Բաժնետերերի ընդհանուր ժողովը, Բանկի Խորհուրդը, Բանկի Վարչությունը, Ներքին աուդիտը, Խորհրդին կից Հանձնաժողովները, Վարչությանը կից Հանձնաժողովները, Վարկային կոմիտեն և Պահուստների կառավարման Կոմիտեն: Բաժնետերերի ընդհանուր ժողովը հանդիսանում է Բանկի կառավարման բարձրագույն մարմինը, կայացնում է որոշումներ Բանկի գործունեության հիմնական հարցերի վերաբերյալ: Բաժնետերերի ընդհանուր ժողովն անց է կացվում ամեն տարի: Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից ընդունված որոշումները, ինչպես նաև քվեարկության արդյունքները նույն կարգով տեղեկացվում են բաժնետերերին:

Բանկի Խորհուրդը հանդիսանում է Բանկի կառավարման կոլեգիալ մարմինը, որը սահմանում է Բանկի գործունեության հիմնական ռազմավարական ուղղությունները երկարաժամկետ հեռանկարում, ինչպես նաև՝ ներքին վերահսկողության կազմա-կերպման մոտեցումները: Բանկի Խորհուրդը, իրականացնելով իր գործունեությունը, հաշվետու է Բաժնետերերի ընդհանուր ժողովին, գործում է Բանկի և բաժնետերերի շահերի համաձայն, ինչպես նաև ապահովում է բոլոր այլ շահագրգիռ անձանց շահերը և օրինական պահանջները:

Բանկի Վարչությունն իրականացնում է ընթացիկ, օպերացիոն գործունեության ղեկավարումը լիազորությունների շրջանակներում, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ: Վարչությունը հաշվետու է Բաժնետերերի ընդհանուր ժողովին և Բանկի Խորհրդին:

Ներքին աուդիտն ունի անկախ կարգավիճակ, գործում է Խորհրդի անմիջական հսկողության ներքո: Իրականացնում է Բանկի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության ստուգում և գնահատում:

ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

Ներդրումային հանձնաժողովը հանդիսանում է խորհրդատվական-խորհրդակցական մարմին, որն ապահովում է նախնական ներդրումային նախագծերի և ծրագրերի քննարկումը, ինչպես նաև Բանկի ներդրումային քաղաքականության բարելավումը: Հաշվետու ժամանակահատվածում գումարվել է 3 նիստ:

Աուդիտի և ռիսկերի հանձնաժողովն ապահովում է ռիսկերի կառավարման և կորպորատիվ կառավարման ներքին վերահսկողության համակարգերի արդյունավետության բարձրացումը: Հաշվետու ժամանակահատվածում գումարվել է 3 նիստ:

Պարզևատրումների հանձնաժողովը սահմանում և Խորհրդի հետ համաձայնեցնում է Բանկի բարձրագույն ղեկավարության անդամների պարզևատրումների ընդհանուր սկզբունքները և քաղաքականությունը, աջակցում է Բանկի կադրային քաղաքականության և անձնակազմի մոտիվացիոն սխեմայի կատարելագործմանը: Հաշվետու ժամանակահատվածում գումարվել է 3 նիստ:

ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ ԿԻՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

Ակտիվների և պասիվների կառավարման և Սակագնային հանձնաժողովն իրականացնում է Բանկի հաշվեկշռի կառուցվածքի կառավարման ոլորտում Բանկի գործունեության համակարգումը, ակտիվների և պասիվների ծավալների ըստ ժամկետների և եկամտաբերության օպտիմալ հարաբերակցության հասնելու նպատակով, անց է կացնում Բանկի իրացվելիության կարգավիճակի մոնիտորինգ, ռեսուրսների տեղաբաշխումն առաջնային բիզնես ուղղություններով, սահմանում է առավել ռացիոնալ ֆոնդավորման ձևեր ու կառուցվածքներ: Բանկային գործիքների համար համակարգում է գնային քաղաքականության և սակագնային ցանցի ձևավորումը: Հաշվետու ժամանակահատվածում գումարվել է 36 նիստ:

Տեղեկատվական Տեխնոլոգիաների և Տեղեկատվական Տեխնոլոգիաների և Տեղեկատվական Անվտանգության հանձնաժողովը համակարգում է բանկային տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և արդիակա- նացման ոլորտում Բանկի քաղաքականությանն ուղղված զարգացման մշակման հետ կապված աշխատանքները, աջակցում է ավելի կատարելագործված տեխնոլոգիաների ներդրմանը, ավտոմատացմանը, որի նպատակն է բարձրացնել հաճախորդների սպասարկման որակը և օպտիմալացնել առկա տեխնոլոգիաները:

Հանձնաժողովն իրականացնում է տեղեկատվական անվտանգության ապահովման համակարգի կառավարումը, որի նպատակն է ապահովել Բանկի տեղեկատվական ակտիվների անվտանգությունը, համաձայն միջազգային չափանիշների և ներքին կանոնակարգերի: Հաշվետու ժամանակահատվածում գումարվել է 9 նիստ:

Անձնակազմի գնահատման հանձնաժողովն ապահովում է Բանկի պարզևատրումների և խրախուսումների արդյունավետ և թափանցիկ պրակտիկայի ձևավորումը, կարգապահական միջոցների կիրառումը, իրենց առջև դրված նպատակներին հասնելու համար իրականացնում է առանցքային ստորաբաժանումների աշխատանքների գնահատումը: Հաշվետու ժամանակահատվածում գումարվել է 18 նիստ:

Գույքագրման, գնումների և օտարման հանձնա ժողովը որոշումներ է ընդունում մաշված և հետագա շահագործման ոչ ենթակա լինելու գույքի դուրս գրման վերաբերյալ՝ ըստ տարեկան և միջանկյալ գույքագրման արդյունքների Հաշվետու ժամանակահատվածում գումարվել է 5 նիստ:

Վարկային կոմիտեն վարկառուի վարկունակության և վճարունակության վերլուծության հիման վրա, հավատարիմ մնալով Բանկի վարկային քաղաքականության հիմնական սկզբունքներին, ընդունում է որոշում իր լիազորությունների սահմաններում վարկային գործարքների իրա-կանացման հնարավորության և դրանց պայմանների վերաբերյալ, ինչպես նաև այլ հարցերի վերաբերյալ (ժամկետների երկարաձգում, պայմանների փոփոխություն և այլն): Հաշվետու ժամանակահատվածում գումարվել է 38 նիստ:

Պահուստների կառավարման հանձնաժողովը Բանկի վարկային պորտֆելի կարգավիճակի վերլուծության հիման վրա վերանայում է Բանկի վարկային պորտֆելի առողջացման ուղիները վերակազմավորման և վարկային պարտավորությունների վերաֆինանսավորման

ճանապարհով: Հանձնաժողովը իրավասու է որոշակի սահմաններում ընդունել որոշումներ կամ Խորհրդին ներկայացնել առաջարկություններ վարկային պարտքի ներման վերաբերյալ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՎԱՐԿԱՆԻՇ

Moody's Investors Service միջազգային գործակալությունը բարձրացրել է Յունիբանկի վարկանիշը՝ սահմանելով B2 դրամով և արտարժույթով երկարաժամկետ ավանդների համար: Կանխատեսումը՝ կայուն:

ԹՂԹԱԿԻՑ ԲԱՆԿԵՐ

CB UNISTREAM

BANK OF GEORGIA

RAIFFEISEN ZENTRALBANK OESTERREICH AG

RIETUMU BANKA

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 Ֆինանսական արդյունքների մասին
« 30 » ՍԵՊՏԵՄԲԵՐ 2017թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53.

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	Ընթացիկ միջանկյալ ժամանակա-շրջան 01.07.17_30.09.17	Հաշվետու ժամանակա-շրջան 01.01.17_30.09.17	Նախորդող ֆինանսական տարվա համադրելի ընթացիկ միջանկյալ ժամանակա-շրջան (ստուգված) 01.07.16_30.09.16	Նախորդ ժամանակաշրջան 01.01.16_30.09.16 (ստուգված)
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	3	4,678,399	13,839,178	4,729,590	13,883,930
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	3	(2,834,776)	(9,108,728)	(3,259,523)	(9,760,330)
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ		1,843,623	4,730,450	1,470,067	4,123,600
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	4	1,151,490	3,392,910	951,875	2,803,337
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	4	(94,826)	(240,678)	(91,255)	(231,364)
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ		1,056,664	3,152,232	860,620	2,571,973
Եկամուտ շահաբաժիններից					
Զուտ եկամուտ առևտրային գործառնություններից	5	(4,564)	282,879	50,875	287,426
Այլ գործառնական եկամուտներ	6	259,799	1,225,081	430,115	923,244
Գործառնական եկամուտներ		3,155,522	9,390,642	2,811,677	7,906,243
Զուտ մասհամուժներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին	7	(1,501,864)	(4,226,939)	(1,132,807)	(2,396,460)
Ընդհանուր վարչական ծախսեր	8	(801,872)	(2,482,289)	(750,896)	(2,274,002)
Այլ գործառնական ծախսեր	9	(762,414)	(2,262,339)	(851,639)	(2,448,237)
Վերահսկվող միավորներում ներդրումներից զուտ շահույթ/վնաս	10				
Շահույթ/ (վնաս) մինչև հարկումը		89,372	419,075	76,335	787,544
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	11	(18,113)	(200,894)	(23,954)	(164,913)
Շահույթ (վնաս) հարկումից հետո		71,259	218,181	52,381	622,631
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթ	12				
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նույնացված շահույթ	12				
Ժամանակաշրջանի զուտ շահույթ					
Այլ բվում					
Մայր կազմակերպության բաժնեմաս					
Չվերահսկվող բաժնեմաս					

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.09.2017թ.

ԿՏ



Ստորագրություն
 Կ. ՄԱՍԻՍԻԱՆ
 ԿԵՆՏՐԱԿԱՆ ԳՐԻՄՈՒՄԸ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին
 « 30 » ՍԵՊՏԵՄԲԵՐ 2017թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53,
 (բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Հաշվետու ժամանակաշրջան 01.06.17_30.09.17	Նախորդ ժամանակաշրջան 01.06.16_30.09.16
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		
Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնությունների վերահաշվարկից		
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ վերագնահատումներ	484,665	800,741
Դրամական հոսքերի հեջավորում		
Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումներից օգուտներ		
Այլ համապարփակ եկամտի գծով շահութահարկ	(96,933)	(160,148)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո	387,732	640,593
Համապարփակ ֆինանսական արդյունք	605,913	1,263,224
Այդ թվում՝		
Մայր կազմակերպության բաժնեմաս		
Չվերահսկվող բաժնեմաս		

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.09.2017թ.

ԿՏ



(Handwritten signature)
 ՎԵՐԱՀԱՏՎՈՒՄ
 ՎԵՐԱՀԱՏՎՈՒՄ

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ֆինանսական վիճակի մասին
« 30 » ՍԵՊՏԵՄԲԵՐ 2017թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53,
(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

	ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	Ընթացիկ միջանկյալ ժամանակա-շրջանի վերջի դրությամբ 30.09.2017	Նախորդող ֆինանսական տարվա վերջի դրությամբ (ստուգված) 31.12.2016
1	Ակտիվներ			
1.1	Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	13	23,486,343	30,971,011
1.2	Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտորներ	13.1	62,081	56,073
1.3	Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14	3,849,193	5,944,176
1.5	Հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառվածություններ	16	126,762,619	118,627,063
1.6	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ	17	21,060,227	14,399,954
1.10	Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	20	8,959,677	9,031,814
1.11	Հետաձգված հարկային ակտիվներ	11		
1.12	Կանխավճար շահութահարկի գծով	21.1	241,140	81,010
1.13	Այլ ակտիվներ	21	4,458,006	6,284,988
	Ընդամենը՝ ակտիվներ		188,879,286	185,396,089
2	Պարտավորություններ			
2.1	Պարտավորություններ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	22	7,096,680	5,042,688
2.2	Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	23	132,529,715	131,138,382
2.3	Փոխառություն	23.1	8,653,462	10,134,574
2.4	Բանկի կողմից բողոքված արժեթղթեր	24	3,517,909	2,652,531
2.7	Հետաձգված հարկային պարտավորություններ	11	1,158,869	957,978
2.8	Պահուստներ	30		
2.9	Այլ պարտավորություններ	27	515,505	626,893
	Ընդամենը՝ պարտավորություններ		153,472,140	150,553,046
3	Կապիտալ			
3.1	Կանոնադրական կապիտալ	28	20,489,653	19,093,378
3.2	Էմիսիոն եկամուտ		9,605,638	7,790,481
3.3	Պահուստներ՝		1,688,452	1,342,530
3.3.1	Գլխավոր պահուստ		426,483	426,482
3.3.2	Վերազնահատման պահուստներ		1,261,969	916,048
3.4	Չբաշխված շահույթ (վնաս)		3,623,403	6,616,654
3.5	Կապիտալի այլ տարրեր			
	Մարդ կազմակերպությանը պատկանող կապիտալ			
	Փոքրամասնության բաժնեմաս			
	Ընդամենը՝ կապիտալ		35,407,146	34,843,043
	Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		188,879,286	185,396,089

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _14.09.2017թ.

ԿՏ



Ստորագրողի անունը և պաշտոնը
Ստորագրողի անունը և պաշտոնը

ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին

« 30 » ՍԵՊՏԵՄԲԵՐ 2017թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53
(քանկի անվանումը և գտնվելու վայրը)

(հազար դրամ)

Սեփական կապիտալի տարրերի անվանումը	Կանոնադրական կապիտալ			Էմիսիոն եկամուտ/վնաս	Գլխավոր պահուստ	Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործառնություններից	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումներ	Գրանցված կտրորի հեջավորում	Ոչ բնթափելի ակտիվների վերագնահատումներից օգուտներ	Գրաշխյալ շահույթ/վնաս	Միջանկյալ շահութաբաժիններ	Ընդամենը	Գվերբահվելու բաժնեմաս	Ընդամենը կապիտալ
	Կանոնադրական կապիտալ	Հետ գնված կապիտալ	Ձուտ գումարը											
Հոդվածներ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (I աղյուսակ)														
1. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2016 թ. (ստուգված/չստուգված)	14,167,947	-	14,167,947	1,387,422	421,851	-	(913,720)	-	421,036	7,224,556	-	-	-	22,709,092
1.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը														-
2. Վերահաշվարկված մնացորդը														-
3. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝	3,487,956		3,487,956	4,534,043										8,021,999
3.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ														-
3.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին			-											-
4. Համապարփակ եկամուտ														-
5. Ըահութաբաժիններ														-
6. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝														-
6.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված աճանցյալ գործիքների աճ/նվազում														-
7. Ներքին շարժեր, այդ թվում՝														-
7.1. Մասհանումներ գլխավոր պահուստին					4,632		640,593			617,998				1,263,223
7.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում					4,632					(4,632)				-
7.3. Էմիսիոն վնասի ծածկում														-
7.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում														-
7.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր							640,593			622,630				1,263,223
8. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի վերջում առ 30 սեպտեմբերի 2016 թ. (ստուգված/չստուգված)	17,655,903	-	17,655,903	5,921,465	426,483	-	(273,127)	-	421,036	7,842,554	-	-	-	31,994,314

Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (II աղյուսակ)														
9. Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2017 թ. (ստուգված/չստուգված)	19,093,378	-	19,093,378	7,790,481	426,483	-	(381,873)	-	1,297,921	6,616,654	-	-	-	34,843,044
9.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը														
10. Վերահաշվարկված մնացորդը														
11. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ քաժմենտումների (քաժմենտների) գծով, այդ թվում՝	1,396,275		1,396,275	1,815,157										3,211,432
11.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ	1,396,275		1,396,275	1,815,157										3,211,432
11.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված քաժմենտումների (քաժմենտների, փայերի) հաշվին														-
12. Այլ համապարփակ եկամուտ														
13. Ընդհանուր շահեր										(3,211,432)				(3,211,432)
14. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝														-
14.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված աճանցյալ գործիքների աճ/նվազում														-
15. Ներքին շարժեր, այդ թվում՝							387,732		(41,811)	218,181				564,102
15.1. Մասնաճանապարհի գլխավոր պահուստին														-
15.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում														-
15.3. Եմիսիոն վնասի ծածկում														-
15.4. Հիմնական միջոցների և ոչ կյուբական ակտիվների վերագնահատումից արժեքի աճ/նվազում									(41,811)					(41,811)
15.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր							387,732			218,181				605,913
16. Մնացորդը միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ 30 սեպտեմբերի 2017 թ.	20,489,653	-	20,489,653	9,605,638	426,483	-	5,859	-	1,256,110	3,623,403	-	-	-	35,407,146

Հաշվետվության վավերացման ամսաթիվը _ 14.09.2017թ.

ԿՏ



ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ

« 30 » ՍԵՊՏԵՄԲԵՐ 2017թ.

ՅՈՒՆԻԲԱՆԿ ԲԲԸ ՀՀ ք.Երևան, 0010, Չարենցի 12-53

(բանկի անվանումը և գտնվելու վայրը)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթ ազրու թյուն	Նախորդ ժամանակաշրջան 30.09.2016	Հաշվետու ժամանակաշրջան 30.09.2017
1. Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		x	x
Դրամական միջոցների զուտ հոսքեր՝ մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը		3,934,916	7,262,777
Ստացված տոկոսներ		12,074,857	12,022,468
Վճարված տոկոսներ		(9,713,548)	(9,256,110)
Ստացված կոմիսիոն գումարներ		2,786,972	3,361,479
Վճարված կոմիսիոն գումարներ		(231,364)	(240,678)
Առևտրային նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներից օգուտ/(վնաս)		908,978	1,517,163
Արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններից օգուտ/(վնաս)		447,932	456,733
Նախկինում դուրս գրված ակտիվների վերադարձ		1,117,607	2,270,342
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ		(2,259,282)	(2,467,237)
Գործառնական գործունեությունից ստացված այլ եկամուտներ և վճարված այլ ծախսեր		(1,197,236)	(401,383)
Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից		(1,328,388)	(20,248,431)
Գործառնական ակտիվներում նվազում/ (ավելացում)		(18,213,789)	(18,837,677)
այդ թվում՝			
վարկերի և փոխառությունների նվազում/ (ավելացում)		(14,006,112)	(12,510,505)
առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի նվազում (ավելացում)		(3,585,040)	(6,768,120)
Ֆինանսական վարձակալության գծով ստացվելիք գումարների նվազում/ (ավելացում)			
այլ գործառնական ակտիվների նվազում/(ավելացում)		(622,637)	440,948
Գործառնական պարտավորությունների ավելացում (նվազում)		16,885,401	(1,410,754)
այդ թվում՝			
հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ավելացում/(նվազում)		16,837,613	(1,972,048)
այլ գործառնական պարտավորությունների նվազում (ավելացում)		47,788	561,294
Ջուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը		2,606,528	(12,985,654)
Վճարված շահութահարկ			(160,130)
Ջուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		2,606,528	(13,145,784)
2. Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		x	x
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում)			
Այլ անձանց կանոնադրական կապիտալում ներդրումների նվազում (ավելացում)			
Այլ բանկերում տեղաբաշխված ավանդների նվազում (ավելացում)			
Հիմնական միջոցներում և ոչ նյութական ակտիվներում կապիտալ ներդրումների նվազում (ավելացում)		(34,005)	(105,970)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(626,347)	(142,782)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում		344,129	143,688
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից		(2,184,987)	(360,388)
Ջուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		(2,501,210)	(465,452)
3. Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		x	x
Վճարված շահաբաժիններ			(3,211,432)
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)			1,776,361
Բանկերից ստացված փոխառությունների ավելացում (նվազում)		(11,098,687)	2,631,255
Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)		498,933	(1,228,388)
Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)		2,372,774	865,378
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական կապիտալում		8,022,000	3,211,432
Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք գումարների ավելացում (նվազում)			
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից			
Ջուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից		(204,980)	4,044,606
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(105,034)	519,677
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		(204,696)	(9,046,953)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	13_2	26,012,823	33,547,636
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	13_2	25,808,127	24,500,683



ՄԻՋԱՆԿՅԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՐԵՎԱՆԻ ՎԵՐԵՍԻՆԻ
 ՎԵՐԵՍԻՆԻ ԳՆԱՀԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԵՍԻՆԻ